



TK&PARTNERS
WEEKLY CLIENT ALERT N 30

1. Խորհրդարանական նախագծեր
2. Կառավարության որոշումներ
3. Հարկային օրենսդրություն
4. Գրիգոր Նարեկացի

#YourSupportTeam
Collaborating firm with Andersen Global!



Corporate
Governance
Center



IFLR1000

Chambers
AND PARTNERS

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՈՒՄ

Ազգային ժողովի կողմից ընդունվել է օրենքի նախագիծ, որով առաջարկվում է՝ վերացնել տարածքային թեկնածուների համակարգը (ռեյտինգային ընտրակարգը) նախատեսելով միայն Հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարածք:

Նախագիծն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից **երկրորդ** ընթերցմամբ:

Ավելին՝ [հղումով](#)

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

**ԱՐՑԱԽՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ
ՎԻՐԱՎՈՐՎԱԾ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԱԾԽԱՏԱՆՔԻ ՏԵՂՎՈՐՄԱՆ
ԴԵՊՐՈՒՄ ԳՈՐԾԱՏՈՒԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՓԱԹԵԹ**

2021 թվականի ապրիլի 1-ին ՀՀ կառավարությունը հաստատել է ռազմական գործողությունների հետևանքով վնասվածք (վիրավորում) ստացած և հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված նախկին զինծառայողներին (նրանց հավասարեցված անձանց) աշխատանքի ընդունած գործատուներին պետական աջակցություն տրամադրելու միջոցառումների փաթեթ:

Սույն միջոցառման շրջանակներում աշխատանքի տեղավորված յուրաքանչյուր անձի համար՝ գործատուին տրամադրվում է աջակցություն՝ այդ անձի աշխատավարձից հաշվարկված և վճարված եկամտային հարկի չափով, եռամսյակային կտրվածքով՝ առավելագույնը 100,000 դրամի չափով և միանվագ փոխհատուցում՝ ոչ ավելի, քան 500,000 դրամի չափով գործատուի մոտ աշխատատեղի հարմարեցման անհրաժեշտության դեպքում:

Ավելին՝ [հղումով](#)

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱՊԱՀ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է ավելացված արժեքի հարկ վճարողի դիմումի հիման վրա վերջինիս օրինապահ հարկ վճարողի հավաստագրի տրամադրման կամ դրա տրամադրումը մերժելու հնարավորություն: Նախագծով օրինապահ հարկ վճարողի հավաստագրի գործողության ժամկետը կգործի 1 տարի ժամկետով: Օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողների համար Օրենսգրքով և այլ իրավական ակտերով կարող են սահմանվել վարչարարության իրականացման բարենպաստ պայմաններ:

Օրենքի փոփոխության նախագիծը Ազգային ժողովի կողմից ընդունվել է առաջին ընթերցմամբ 25.03.2021թ.:

Ավելին՝ [հղումով](#)



ՀԱՐԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է սահմանել հսկիչ դրամարկղային մեքենաների բացակայության կամ շահագործման կանոնների խախտումների արձանագրման համար նաև տեսանկարահանման սարքերի օգտագործման հնարավորություն: Նախագիծն ուղարկվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ կարծիք ստանալու:

Ավելին՝ [հղումով](#):

#YourSupportTeam
Collaborating firm with Andersen Global!



Corporate
Governance
Center



IFLR1000

Chambers
AND PARTNERS

ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՄԻԿՐՈԶԵՆՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել հարկային տարվա ընթացքում հսկիչ դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների երրորդ խախտումը կատարելու հիմքով կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին և նոտարներին շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու, իսկ միկրոձեռնարկատիրության սուբյեկտներին՝ այդպիսին չհամարվելու դրույթները: Նախագիծն ուղարկվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ կարծիքի ստանալու:

Ավելին՝ [հղումով](#)

ՕՐԵՆՍԳՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՍԿԻՉ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՇՎՀՎԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել հսկիչ դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 2-րդ և ավելի անգամ խախտումների հիմքով կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի գործունեությունը կասեցնելու հետ կապված դրույթները:

Նախագիծն ուղարկվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ կարծիք ստանալու:

Ավելին՝ [հղումով](#)



**ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱԾՎԱՐԿՆԵՐԻ
ԿԱՆՈՆՆԵՐԻ ԶՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ
ՏՈՒԳԱՆՔԻ ՆՈՐ ԶԱՓԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ**

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծով փոփոխվել է կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար հսկիչ դրամարկղային մեքենայի տեխնիկական պահանջների խախտման և դրանց կիրառության խախտման համար նախատեսված տուգանքների չափերը: Նախագծով սահմանվում է ՀԴՄ չկիրառելու համար, ինչպես նաև ՀԴՄ կիրառության կանոնների խախտման համար կիրառվող տուգանքի մեկ միասնական մեծություն՝ անկախ տարվա ընթացքում կատարված խախտման քանակից և գործունեության ոլորտից: Նախագիծն ուղարկվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ կարծիք ստանալու:

Ավելին՝ [հղումով](#)



#YourSupportTeam
Collaborating firm with Andersen Global!




Corporate
Governance
Center



IFLR1000

Chambers
AND PARTNERS

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ



ՄԲ. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ (հաւանաբար՝ 947–1003-ից յետոյ), քանաստեղծ, մեկնիչ, երաժիշտ, Հայ Առաքելական Եկեղեցու տօնելի սուրբ, Խոսրով Անձեւացի եպիսկոպոսի կրտսեր որդին: Կրթութիւնը ստացել է իբրեւ կուսակրօն հոգեւորական դաստիարակուել է Նարեկավանքի բարձր տիպի դպրոցում վանահայր եւ ուսուցչապետ Անանիա Նարեկացու (հաւանաբար մօր հօրեղբօր որդու) ինամակալութեամբ: Գրիգոր Նարեկացին XII դ. կեսից ոչ ուշ դասուել է սրբերի շարքը: Հայ Եկեղեցին սուրբ Գրիգոր Նարեկացու յիշատակը տօնում է Խաչվերացի հինգերորդ կիրակիի նախընթաց շաբաթ օրը սուրբ թարգմանիչ վարդապետների հետ:

2015 թուականի ապրիլի 12-ին Վատիկանի Ս. Պետրոսի տաճարում հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցին նուիրուած սուրբ պատարագին Հռոմի Ֆրանցիսկոս պապը սուրբ Գրիգոր Նարեկացուն հռչակել է Տիեզերական եկեղեցու վարդապետ:

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

Գ. Նարեկացու մեծագոյն ստեղծագործական սխրանքը «Մատեան ողբերգութեան» պոեմն է (1001-03): 95 (ՂԵ) գլուխներից բաղկացած երկն աղօթքի ձեւով արտայայտուած խօսք է՝ ուղղուած Աստծուն («Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ»), անկեղծ ու անմիջական խոստովանանք, աղաչանք ու աղերսանք, նաեւ փառաբանութեան երգ, մաղթանք ու տենչանք՝ իշխող ողբերգական տրամադրութեամբ:



[Աղբյուր](#)

#YourSupportTeam
Collaborating firm with Andersen Global!



Corporate
Governance
Center



IFLR1000

Chambers
AND PARTNERS